Մ. Նալբանդյանի անվան հ 33 հիմնական դպրոց

Արձանագրություն 6

2021 թ. ապրիլի 21-ին տեղի ունեցավ հ.33 դպրոցի կառավարման խորհրդի նիստը: Նիստին մասնակցում են խորհրդի բոլոր 8 անդամները: Նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով առցանց մասնակցում են դպրոցի նախկին տնօրեն Ի.Վարդանյանը, դպրոցի տնօրենի ժ/պ Ն. Մխիթարյանը, գլխավոր հաշվապահ Լ.Սարգսյանը:

Օրակարգում՝

1. Օրակարգի հաստատում:

/զեկ. Ն. Սարիբեկյան /

2.Նախորդ նիստի որոշումների կատարման մասին:

/զեկ. Ն. Սարիբեկյան /

3.Երևանի քաղաքապետի որոշման տեղայնացում:

/զեկ. Ն. Սարիբեկյան /

4.Ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական եռամսյակային հաշվետվության քննարկում:

/զեկ.Լ.Սարգսյան /

5. Ուսումնական հաստատության եռամսյակային համամասնության բաշխմամբ կազմած ծախսերի նախահաշվի քննարկում:

/զեկ.Լ.Սարգսյան /

6.Տնօրենի հաշվետվության քննարկում:

/զեկ.Ի.Վարդանյան /

7.Երևանի քաղաքապետի որոշման տեղայնացում:

/զեկ. Ն. Սարիբեկյան /

8. «Մ. Նալբանդյանի անվան հ 33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

/զեկ. Ն. Սարիբեկյան/

Ելնելով խորհրդի մի խումբ անդամների կարծիքներից, խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նախապես հայտարարված օրակարգը:

Հիմք ընդունելով խորհրդի անդամների կարծիքները և հիմնվելով կանոնադրության 4-րդ գլխի 32-րդ կետը՝ հաստատության խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի №870-Ա 30.03.2021թ. որոշման համաձայն «Միքայել Նալբանդյանի անվան հ 33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ խորհրդի կազմը/ կազմը կցվում է:/

Հիմք ընդունելով գլխավոր հաշվապահի կողմից ներկայացված հաստատության՝ ֆինանսատնտեսական եռամսյակային հաշվետվությունը՝ հաստատության խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հավանություն տալ գլխավոր հաշվապահի կողմից ներկայացված 2021թ ֆինանսատնտեսական առաջին եռամսյակային հաշվետվությանը:

Հիմք ընդունելով գլխավոր հաշվապահի կողմից ներկայացված հաստատության՝ եռամսյակային համամասնության բաշխմամբ կազմած ծախսերի նախահաշվը՝ հաստատության խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հավանություն տալ գլխավոր հաշվապահի կողմից ներկայացված 2021թ եռամսյակային համամասնությամբ բաշխմամբ կազմած ծախսերի նախահաշվին:

Հիմք ընդունելով կառավարման խորհրդի անդամների կարծիքները՝ հաստատության խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հավանություն տալ դպրոցի տնօրեն Ի. Վարդանյանի հաշվետվությանը:

Հիմք ընդունելով խորհրդի անդամների կարծիքները և հիմնվելով քաղաքապետի №1164-Ա 19.04.2021թ որոշման վրա՝ հաստատության խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի №1164-Ա 19.04.2021թ. որոշումը:

Հիմք ընդունելով «Մ. Նալբանդյանի անվան հ 33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 33-րդ կետի 1-ին ենթակետը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2021թ-ի փետրվարի 11-ի N161-Ն որոշմամբ հաստատված «Պետական

հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգ »-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հաստատության խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Մ. Նալբանդյանի անվան հ 33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ տնօրենի թափուր տեղի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հայտարարել մրցույթ:

2.Մրցույթը հայտարարելու մասին սույն որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Երևանի քաղաքապետարան:

3.Հաստատել տնօրենի թափուր տեղի մրցույթի հայտարարության բովանդակությունը, հանձնարարել խորհրդի նախագահին մրցույթի մասին հայտարարությունը հրապարակել azdarar.am կայքում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում ներկայացվելուց հետո՝ առավելագույնը 2 աշխատանքային օրում:

4.Մրցույթը անցկացնել «Մ. Նալբանդյանի անվան հ 33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում:

5.Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի նախագահ Ն. Սարիբեկյանի վրա: Մրցույթի մասնակիցների գործերը ընդունել մրցույթի մասին հայտարարության հրապարակման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում:

6.Մրցույթը նշանակել փաստաթղթերի ընդունման ավարտից հետո 10-րդ աշխատանքային օրը:

Նախագահ՝ Ն.Սարիբեկյան

Քարտուղար՝ Վ. Թադևոսյան